ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆԻ ԴԱՎԻԹԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԺԳ. 00.001 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ն. Կ. Հարությունյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Հ.Պետրոսյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լ.Հ.Ղուկասյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի նոյեմբերի 18-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի հոկտեմբերի 7-ին:

Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **Ա. Փ. Ղազարյան**

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հարափոփոխ աշխարհում, որտեղ մարդու գործունեության համար տարածքային սահմաններ չկան, մեծանում է պետությունների համար իրենց երկրի ներսում մտավոր ներուժի պահպանման ու զարգացման, հասարակության գիտակցական մակարդակի բարձրացման և բոլոր ոլորտներում մարդկային ռեսուրսի զարգացման խնդիրը: Այս և համանման մարտահրավերներին դիմակայելու գործում շատ կարևոր է պետության վարած կրթական քաղաքականությունը, քանի որ բարձրագույն մասնագիտական կրթության միջոցով ենք պատրաստում մասնագետներ երկրի բոլոր ոլորտների համար, որոնց մասնագիտական որակով է պայմանավորված ոլորտի, համապատասխանաբար նաև երկրի զարգացումը:

Հայաստանի նման զարգացող երկրի համար իրավիճակն ավելի է բարդանում, քանի որ համաշխարհայնացման պայմաններում Հայաստանը դեռ խնդիրներ ունի ազգային կրթության համակարգի պահպանման ու զարգացման, միջազգային կրթական ասպարեզում մրցունակության ապահովման և բարձրագույն կրթության ազգային համակարգի գրավչության մեծացման գործում: Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին, որը բարձրագույն կրթության ոլորտում սովորողների ու աշխատողների համար մեծ հնարավորություն է շարժունության տեսանկյունից, բայց պետության համար մտահոգվելու ևս մեկ խնդիր՝ մտավոր ներուժի արտահոսք, որի լուծումը Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի անընդհատ կատարելագործումն է: Տարբեր երկրների կրթության համակարգերի ուսումնասիրությունը, նրանց կառավարման համեմատական վերլուծությունը լուծում է երկու կարևոր խնդիր՝ ճանաչողական և առաջավոր փորձի փոխանակման:

Սույն հետազոտությամբ առաջին անգամ համեմատական վերլուծության են ենթարկվում Հայաստանի և Եվրոպայի զարգացած երկրներից մեկի՝ Անգլիայի բարձրագույն կրթության կառավարման համակարգերը, վեր հանվում նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները:

Ահա սրանցով է պայմանավորված մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է համեմատական վերլուծության ենթարկել Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության կառավարման համակարգերը, դրանց նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները:

Հետազոտության առաջադիր խնդիրները:

1. Ներկայացնել Հայաստանի և Անգլիայի կրթական քաղաքականությունը բարձրագույն կրթության ոլորտում:
2. Ներկայացնել Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի օրենսդրական դաշտը:
3. Մեկնաբանել Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգերը:

4. Ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի և Անգլիայի որակի ապահովման գործընթացները բարձրագույն կրթության համակարգում։
5. Համեմատական վերլուծության ենթարկել Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները՝ վեր հանելով նմանություններն ու տարբերությունները։
6. Ուսումնասիրել երկու երկրներում իրականացվող բարեփոխումներն ու ինովացիոն գործընթացները, ընդգծելով վերջիններիս առանձնահատկությունները։
7. Մշակել բարձրագույն կրթության համակարգի կառավարման նոր մեխանիզմներ Հայաստանի համար՝ հաշվի առնելով Անգլիայի առաջավոր փորձի ուսումնասիրությունը։

Հետազոտության գիտական նորույթը։

1. Վերլուծվել և վեր են հանվել Հայաստանի ու Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները։
2. Բացահայտվել ու մեկնաբանվել են ՀՀ օրենսդրական ու ենթաօրենսդրական դաշտում առկա հակասությունները։
3. Հետազոտվել և վերլուծվել են Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի զարգացման հեռանկարները։
4. Առաջավոր փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել է Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի կառավարման նոր մեխանիզմ։

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները։

1. Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության ոլորտում պետական կրթական քաղաքականություններն արտացոլում են այն նպատակներն ու խնդիրները, որ պետական կառավարման մարմինները կարևորում են տվյալ ոլորտում։
2. Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի օրենսդրական դաշտերն օժանդակում են տվյալ երկրների բարձրագույն կրթության ոլորտում պետական կառավարման մարմինների վերահսկողության աստիճանը բացահայտելուն։
3. Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգերը նպաստում են երկրների սոցիալ-տնտեսական զարգացվածության աստիճանով պայմանավորված առանձնահատկությունների, խնդիրների և սկզբունքների բացահայտմանը։
4. Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովման գործընթացներն ընդգծում են երկու երկրներում առկա գործընթացային նմանությունները, որոնք պայմանավորված են բոլոնյան գործընթացի պահանջներով։ Միևնույն ժամանակ Անգլիայում որակավորման աստիճանների դասակարգման համակարգը որակի ապահովման մեխանիզմ է։
5. Երկու երկրներում իրականացվող կրթական բարեփոխումները և ինովացիոն գործընթացները նպաստում են դրանց հիմքում ընկած նպատակների իրականացմանը և զարգացման հեռանկարների բացահայտմանը։

6. Հայաստանի բարձրագույն կրթության կառավարման համակարգի մշակած նոր նախագիծը արտացոլում է ազգային կրթության համակարգի առանձնահատկությունները և կրթության համակարգի առջև դրված խնդիրները՝ հաշվի առնելով Անգլիայի առաջավոր փորձի ուսումնասիրությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ուսումնասիրվել և վերլուծվել են Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման վերաբերյալ մեծաթիվ իրավական փաստաթղթեր և մասնագիտական գրականություն, մեկնաբանվել են տարբեր հեղինակների մոտեցումներն ու տեսակետները երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի կառավարման, իրականացրած բարեփոխումների, ձեռքբերումների և խնդիրների վերաբերյալ՝ տալով դրանց մեր մոտեցումները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հիմնախնդրի վերաբերյալ մեծաթիվ սկզբնաղբյուրների վերլուծական նյութը և մշակված առաջարկությունները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության կառավարման ոլորտում համակարգային և ինստիտուցիոնալ մակարդակներում կատարվող բարեփոխումներում: Հետազոտության նյութերը կարող են օգտագործվել նաև կրթության կառավարման բնույթի դասընթացների ժամանակ, ինչպես նաև կարող են օգտակար լինել բարձրագույն կրթության ոլորտը ուսումնասիրողների, հետազոտողների, ոլորտի աշխատողների արդյունավետ գործունեության ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, 7 աղյուսակներից, 4 գծապատկերներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 131 համակարգչային էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված է թեմայի արդիականության հիմնավորումը, սահմանված են հետազոտության նպատակն ու նպատակից բխող խնդիրները, ներկայացված է հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ ***«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի կառավարումը»***, բաղկացած է վեց ենթագլխից, որտեղ ներկայացված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ընդհանուր բնութագիրը և կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև պետական վերահսկողությունը բարձրագույն կրթության ոլորտում:

Առաջին՝ ***«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը»*** ենթագլխում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության ներկայիս համակարգի ձևավորումը, կառուցվածքը, ինչպես նաև համակարգում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները և առանձնահատկություններն ըստ իրավակազմակերպական կարգավիճակների:

Երկրորդ՝ ***«Կրթական քաղաքականությունը և օրենսդրական դաշտը Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում»*** ենթագլխում ներկայացված են պետական կրթական քաղաքականության նպատակները, խնդիրներն ու սկզբունքները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում: Վերլուծված է ոլորտը կարգավորող օրենսդրությունը, վեր են հանվել օրենսդրության մեջ առկա հակասությունները և բացթողումները:

Երրորդ՝ ***«Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետությունում»*** ենթագլխում ներկայացված և վերլուծված են պետական ֆինանսավորման ծավալները և ուղիները: Անդրադարձ է կատարվել նաև բուհերի ֆինանսական ինքնավարությանը, որտեղ բուհերն ունեն բարձր ինքնավարության ցուցանիշ, ինչը պայմանավորված է պետական բյուջեից նվազ ֆինանսավորմամբ:

Չորրորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները»*** ենթագլխում ներկայացված են բուհերի կառավարման գործընթացները, պետական կառավարման մարմինների մասնակցությունը կառավարման գործընթացներին, ինչպես նաև ներբուհական կառավարումը բուհի գործունեության հիմնական ուղղություններով:

Հինգերորդ՝ ***«Որակի ապահովման գործընթացը Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում»*** ենթագլխում ներկայացված են ՀՀ-ում Որակի ապահովման համակարգն ու Որակի ապահովման գործընթացները, որոնք ձևավորվեցին բոլոնյան գործընթացի պահանջներին համապատասխան: Բացահայտվել են նաև ՀՀ-ում հավատարմագրման գործընթացին առնչվող օրենսդրական ու ենթաօրենսդրական փաստաթղթերում առկա հակասությունները:

Վեցերորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները, ինտեգրացիոն և ինովացիոն գործընթացները. բոլոնյան գործընթաց»*** ենթագլխում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի փոփոխությունները: Բարեփոխումների մեկնարկը ԵԲԿՏ-ին անդամակցելու միտումն էր, ինչն այսօր իրողություն է:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ ***«Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարումը»*** բաղկացած է վեց ենթագլխից, որտեղ ներկայացված են Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի ընդհանուր բնութագիրն ու կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև պետական վերահսկողությունը բարձրագույն կրթության ոլորտում:

Առաջին՝ ***«Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը»*** ենթագլխում ներկայացված են Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքն ու առանձնահատկությունները, բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունների տեսակները (համալսարաններ, համալսարանական քոլեջներ, այլընտրանքային մատակարարներ) և նրանց առանձնահատկությունները:

Երկրորդ՝ ***«Կրթական քաղաքականությունը և օրենսդրական դաշտը Անգլիայի բարձրագույն կրթության ոլորտում»*** ենթագլխում ներկայացված են Անգլիայի

պետական կառավարման առանձնահատկությունները, որ պայմանավորված են Սահմանադրական միապետություն լինելով: Անգլիան ունի չկոդաֆիկացված Սահմանադրություն, և երկրի օրենսդրական դաշտը չի կարգավորվում օրենքներով, ինչով պայմանավորված են պետական կրթական քաղաքականության ու օրենսդրական դաշտի առանձնահատկությունները:

Երրորդ՝ ***«Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը Անգլիայում»*** ենթագլխում ներկայացված է Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման առանձնահատկություններն, ինչը բխում է բուհերի կարգավիճակից: Բուհերը ստանում են պետական ֆինանսավորում Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհրդի կողմից այն դեպքում, երբ բարեգործական բնույթ ունեն: Կրթությունն Անգլիայում շատ թանկ է, բայց գործում է պետական ուսանողական վարկերի համակարգ, որն անգլիական բարձրագույն կրթությունը հասանելի է դարձնում իր երկրի քաղաքացիների համար, իհարկե, հաշվի առնելով սովորողների ակադեմիական առաջադիմությունը:

Չորրորդ՝ ***«Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները»*** ենթագլխում ներկայացված են բուհերի կառավարման համակարգերն ու դրանց առանձնահատկությունները: Ներկայացված է ներբուհական կառավարումը, բուհերի կառավարման մարմինների՝ Բուհի խորհրդի և Ակադեմիական խորհրդի ձևավորումը, ռեկտորի՝ փոխկանցլերի ընտրությունն ու գործունեությունը:

Հինգերորդ՝ ***«Որակի ապահովման գործընթացը Անգլիայի բարձրագույն կրթության համակարգում»*** ենթագլխում ներկայացված են Անգլիայի բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովման գործընթացները, որոնք նպատակաուղղված են կրթության համակարգի անընդհատ կատարելագործմանը: Գործում են որակի ապահովման համակարգի գնահատման թվային, տառային և նկարագրական գնահատումներ:

Վեցերորդ՝ ***«Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները, ինտեգրացիոն և ինովացիոն գործընթացները. բոլոնյան գործընթաց»*** ենթագլխում ներկայացված են բարեփոխումներն ու ինովացիաները Անգլիայի բարձրագույն կրթության ոլորտում: Հատկանշական է, որ Անգլիայի բարձրագույն կրթության համակարգում մշակվել են ինովացիաների ուղղություններ, որտեղ կարևոր դեր ունի նոր գաղափարի ստեղծումը: Անգլիայում բոլոր բարեփոխումների ու ինովացիաների հիմնական նպատակը կրթության առևտրայնացումն ու համաշխարհային բուհական դասակարգումներում առաջատար դիրքի պահպանումն է:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները Հայաստանում և Անգլիայում»**, բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ ներկայացված են հետազոտության ընթացքում կատարված վերլուծությունների արդյունքները նմանությունների, տարբերությունների ու առաջարկների տեսքով:

Առաջին՝ ***«Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանությունները»*** ենթագլխում ներկայացված են երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի նմանությունները (Տես՝ Աղյուսակ 1-ում),

որոնք պայմանավորված են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին անդամակցելով, ինչի արդյունքում առկա են նմանություններ բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքի, կառավարման և կրթության բովանդակության մեջ:

Աղյուսակ 1՝ Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանությունները

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ՀԱՅԱՍՏԱՆ	ԱՆԳԼԻԱ
Բոլոնյան գործընթաց	
Եվ՛ Հայաստանը, և՛ Անգլիան միացել են բոլոնյան գործընթացին՝ դառնալով ԵԲԿՏ անդամ երկիր: Երկու երկրներն էլ փոփոխություններ կատարեցին իրենց բարձրագույն կրթության օրենսդրության, կառուցվածքի ու բովանդակության մեջ՝ բոլոնյան գործընթացի պահանջներին համապատասխան: Բոլոնյան գործընթացն երկու երկրներում էլ իրողություն է, բայց Հայաստանում դեռևս կան որոշակի դրույթներ, որոնք ի տարբերություն Անգլիայի, չեն կիրառվում, ինչպես օրինակ՝ դոկտորանտուրան որպես կրթության երրորդ աստիճան ընդունելը:	
Կրեդիտային համակարգ	
Կրեդիտային համակարգի ներդրումը ԵԲԿՏ-ի լիարժեք կայացման կարևոր դրույթներից է, որը գործում է և՛ Հայաստանում, և՛ Անգլիայում: Երկու երկրներում էլ ECTS կրեդիտը պայմանական միավոր է, որը չափում է ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածությունը կրթական վերջնարդյունքին հասնելու համար: Կրեդիտային համակարգն ունի երկու հիմնական գործառույթ՝ կուտակման ու փոխանցման, որոնց շնորհիվ իրականանում է ուսանողների և բարձրագույն կրթության ոլորտի աշխատողների ակադեմիական շարժունությունը, ինչը ևս բոլոնյան գործընթացի հիմնական ուղղություններից է: Կրեդիտների փոխանցումը հնարավոր է միևնույն ծրագրի ներսում, դեպի այլ կրթական ծրագիր, դեպի այլ բուհ՝ այդ թվում օտարերկրյա:	
Բուհերի կառավարման ապակենտրոնացում	
Բոլոնյան գործընթացի մաս էր կազմում նաև բուհերի կառավարման ապակենտրոնացումը, որի արդյունքում բուհերում տեղի ունեցան նաև կառուցվածքային փոփոխություններ: Ստեղծվեցին կոլեգիալ կառավարման մարմիններ, որոնց միջոցով իրականանում է բուհի կառավարման գործընթացը: Բուհի կառավարման մարմիններն են Բուհի խորհուրդը (Հոգաբարձուների խորհուրդը), Գիտական խորհուրդը և Գործադիր մարմինը՝ ռեկտորը: Կառավարման ապակենտրոնացումով մեծացան բուհերի ակադեմիական ազատությունների ու ինքնավարության շրջանակները, բուհի ռեկտորի պաշտոնը դարձավ ընտրովի,	

չնայած այս մասով Անգլիայում դեռ տարբերություն կա՝ բուհի ղեկավար (կանցլեր) և բուհի ռեկտոր (փոխկանցլեր) պաշտոններով պայմանավորված: Բարեփոխումների արդյունքում կառավարման մարմիններում ներգրավվեցին ուսանողներ, ընդ որում՝ համահավասար ներգրավվածության տոկոսով:

Համադրելի որակավորումներ
Միասնական կրթական տարածքի գլխավոր պայմանը կրթական աստիճանների ու որակավորումների համադրելիությունն ու փոխճանաչումն է, ինչն էլ ապահովում է սովորողների ու աշխատողների շարժունությունը: ԵԲԿՏ անդամ երկրներում ստեղծվեցին Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոններ, որոնք միջազգային ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի մաս են կազմում: Միջազգային այդ ցանցի գործունեությունը նպատակաուղղված է որակավորումների արագ և արդար ճանաչմանը, տվյալ երկրի կրթության համակարգի և ազգային որակավորումների մասին տեղեկատվություն տրամադրելուն: Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային կենտրոնը նաև տեղեկանք է տրամադրում այն անձանց, ովքեր ուզում են սովորել կամ աշխատել ԵԲԿՏ անդամ երկրներից որևէ մեկում:
Որակի ապահովում
Որակի ապահովման գործընթացներում ու ընթացակարգերում ևս առկա են նմանություններ, քանի որ ԵԲԿՏ անդամ երկրները, բացի իրենց երկրի որակի ապահովման ազգային համակարգում գործող չափանիշներից ու չափորոշիչներից, առաջնորդվում են նաև Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներով և ուղենիշներով՝ ՈԱԵՉՈՒ (Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG)), որը վերջին խմբագրությամբ հաստատվել է Երևանի կոմյունիկեում՝ 2015 թվականին:
Բուհի կառավարման մարմիններ
Բոլոնիայի հռչակագրի հիմքում ընկած սկզբունքներից էր բուհերում կառավարման ապակենտրոնացումը, որի արդյունքում տեղի ունեցան նաև կառուցվածքային փոփոխություններ: Այս առումով ևս Հայաստանի և Անգլիայի բարձրագույն ուսումնական հաստատությունները կիրառում են բուհերի միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքները: Երկու երկրներում էլ բուհի կոլեգիալ կառավարման մարմինն է բուհի խորհուրդը (Հայաստանում՝ Հոգաբարձուների խորհուրդ և Խորհուրդ, Անգլիայում՝ Խորհուրդ, որոնք նույն գործառույթներն ունեն, իսկ միանձնյա կառավարման մարմինը՝ ռեկտորը: Հայաստանյան և անգլիական բուհերում կան նաև ակադեմիական կառավարման մարմիններ. Հայաստանում՝ Գիտական խորհուրդ, Անգլիայում՝ Ակադեմիական խորհուրդ: Բուհի կառավարման գործընթացներին մասնակից են նաև ուսանողները: Հայաստանում օրենքով

Աղյուսակ 1-ի շարունակությունը

սահմանվում է, որ կառավարման մարմինների սովորող անդամներին ներկայացնում են Ուսանողական խորհուրդները, իսկ Անգլիայում՝ Ուսանողական միավորումները:

Էրազմուս ծրագիր
Էրազմուսը Եվրոպական Միության կողմից իրականացվող ծրագիր է կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի հարցերով: Էրազմուսը գործում է և՛ Հայաստանում, և՛ Անգլիայում, բայց վերջինիս բարձրագույն կրթության համակարգը, ի տարբերություն եվրոպական մյուս երկրների համակարգերի՝ վճարովի է և թանկ: Եվ այս տեսանկյունից Անգլիան Էրազմուսի ծրագրում որպես ընդունող կողմ ակտիվ չէ: Պասիվ է նաև Հայաստանը, բայց Հայաստանի պասիվության պատճառները ոչ մրցունակ կրթության ազգային համակարգն ու օտարալեզու ծրագրերի սակավությունն են:
Լրացուցիչ կրթություն
Հայաստանն ու Անգլիան ևս ժամանակի պահանջներին համապատասխան իրականացնում են լրացուցիչ կրթական ծրագրեր, որոնք երկու երկրներում էլ չեն շնորհում որակավորում: Հայաստանում լրացուցիչ կրթություն իրականացնում են մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները և մանկավարժական գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, իսկ Անգլիայում՝ մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները և կրթության ոլորտի այլընտրանքային մատակարարները: Երկու երկրներում էլ մասնագիտական կրթության ոլորտում ներդրված է կրեդիտային համակարգը, սակայն լրացուցիչ կրթության բնագավառում ստացած կրեդիտները Հայաստանում չեն կարող կրթական աստիճան ստանալիս օգտագործվել, իսկ Անգլիայում դրանք կիրառվում են կրթական աստիճան ստանալու համար:
Ուսանողական ինքնակառավարվող մարմիններ
Եվ՛ Հայաստանում, և՛ Անգլիայում բարձրագույն կրթության համակարգում մեծ դերակատարություն ունեն նաև ուսանողները: Նրանք իրենց մասնակցությունն ունեն բուհի ընթացիկ գործունեությանը և կառավարման համակարգում: Ուսանողների ինքնավարության շրջանակում նրանք կարող են ձևավորել ուսանողական խորհուրդներ կամ այլ մարմիններ, որոնք կգործեն երկրի օրենսդրության և բուհի կանոնադրության շրջանակում՝ պահպանելով իրենց անկախությունն ու ապաքաղաքական ու ապակրոնական գործունեության սկզբունքը:

Երկրորդ՝ ***«Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման տարբերությունները»*** ենթագլխում ներկայացված են երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի կառավարման տարբերությունները(Տես

՝Աղյուսակ 2-ում), որոնք պայմանավորված են այս երկրների զարգացվածության աստիճանով, պետական կառավարման համակարգերով և իրավական դաշտերով։

Աղյուսակ 2՝ Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի *կառավարման* տարբերությունները

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ՀԱՅԱՍՏԱՆ	*ԱՆԳԼԻԱ*
Բուհերի ընդունելության համակարգ	
Բուհերի ընդունելության միասնական կենտրոնացված համակարգ, որը իրականացվում է Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից։ Այս համակարգը բուհերին զրկում է ուսանողներին ընտրելու հնարավորությունից, ինչն ազդում է կրթության որակի վրա։ Մասնագիտական կողմնորոշում իրականացնող կառույցներ համակարգի ներսում չեն գործում, առանձին բուհեր, ինչպես օրինակ ԵՊՀ-ն, կարող են իրականացնել իրենց առաջարկած մասնագիտությունների գծով կողմնորոշման գործընթացներ։	Բուհերի ընդունելության միասնական համակարգ որպես այդպիսին գոյություն չունի։ Բուհերը, հիմնվելով դիմորդների ավարտական քննությունների և իրենց կողմից սահմանված քննությունների արդյունքների վրա, իրենք են ընտրում իրենց ուսանողներին, ինչը հենց նախապայման է որակյալ կրթության։ Անգլիայում հանրակրթական հաստատություններում կան մասնագետներ, ովքեր ավարտական դասարանների աշակերտների հետ մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ են իրականացնում։
Պետպատվերի /վճարովի համակարգ	
Հայաստանում առկա է կրթության պետպատվերի և վճարովի համակարգ։ Պետպատվերի համակարգը պետական պատվերի շրջանակում է գործում, սակայն պետպատվերով իջեցված տեղերն ըստ մասնագիտությունների շատ քիչ են։ Կրթության ոլորտում չկան պետական կրթաթոշակային ֆոնդեր, ինչը կրթության մատչելիության սկզբունքից դուրս է։	Անգլիական բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթությունը վճարովի է, բայց կան ֆոնդեր ու հիմնադրամներ, որոնք փոխհատուցում են ինչպես անգլիացի, այնպես էլ օտարազգի ուսանողների ուսման վճարները։ Անգլիայի բարձրագույն կրթության ոլորտում լայնորեն կիրառվում է նաև ուսանողական վարկերի պետական համակարգը։
Ֆինանսավորման համակարգ	
Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում գործող պետական բուհերը	Անգլիայում բուհերի ֆինանսավորումն իրականացնում են կառավարությունը և

ստանում են պետական ֆինանսավորում, որը բուհերի բյուջեի մոտ 20-30%-ն է կազմում, իսկ մնացած մասը բուհերը ստանում են հիմնականում ուսման վարձերից: Պետական ֆինանսավորում բուհերին տրամադրվում է հետևյալ ուղղություններով. ● անվճար (ՊՊ) համակարգով սովորող ուսանողների թվով, ● բլոկային ֆինանսավորում, ● հետազոտություն՝ մրցույթային հիմունքներով Գիտության պետական կոմիտեի ծրագրերի շրջանակում:	**Աղյուսակ 2-ի շարունակությունը** Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհուրդը: Պետական ֆինանսավորում ստանալու համար նախապայման է բուհերի հավատարմագրումը: Անգլիայում բուհերը պետական ֆինանսավորում ստանում են հետևյալ սկզբունքներով. ● որակական տարբերությունները, ● գիտական գործունեությունը, ● նորարարական գործունեությունը, ● բարեգործական կազմակերպություն լինելով: Բարեգործական բնույթի բուհերը ստանում են բարձր ֆինանսավորում, իսկ մնացածը ինքնաֆինանսավորվող են:
Պետական վերահսկողություն	
Հայաստանի բուհերը կիսաինքնավար են. այսինքն՝ կարող են լինել ԿԳՄՄՆ ենթակա հիմնարկ կամ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպություն, կամ որևէ այլ կանոնադրական մարմին: Հայաստանյան բուհերի կիսաինքնավար լինելն ակնհայտ է օրենսդրական կարգավորումներից, քանի որ օրենսդրությամբ կարգավորվում է բարձրագույն կրթության ողջ ոլորտն ու իրավահարաբերությունները;	Անգլիայի բուհերը անկախ են, այսինքն՝ եկամուտ չհետապնդող կամ բարեգործական կազմակերպություն՝ առանց պետության մասնակցության ու վերահսկողության, պատասխանատու ազգային ռազմավարության և հանրային ֆինանսավորման տեսանկյունից: Անգլիայում բուհերն իրենց գործունեության ընթացքում սահմանափակված չեն, բուհերին տրված է ակադեմիական ազատությունների լայն շրջանակ, որի հիմքում երկրի սահմանած առաջնահերթություններն են:
Ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ կրթություն	
Կրեդիտային համակարգի համատեքստում կիրառվում է միայն ֆորմալ կրթության կրեդիտավորումը, և միայն դա է հանգեցնում որակավորման շնորհման: Փաստացի գոյություն ունեն ոչ ֆորմալ ու ինֆորմալ կրթության ձևեր,	Կրեդիտային համակարգի համատեքստում կիրառվում են ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության կրեդիտավորումն ու դրանք բոլորը հանգեցնում են որակավորման կամ կրթական աստիճան ստանալուն:

բայց օրենսդրությամբ դրանք չեն կարգավորվում և չափելի չեն։	**Աղյուսակ 2-ի շարունակությունը**
Եռաստիճան կրթական համակարգ	
Չնայած ԵԲԿՏ անդամ լինելուն, ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում դեռևս գործում է երկաստիճան կրթական համակարգ, իսկ ասպիրանտուրան և դոկտորանտուրան հետբուհական կրթություն են համարվում։ Գիտական աստիճանաշնորհման երկմակարդակ համակարգ է գործում՝ գիտությունների թեկնածու և գիտությունների դոկտոր։ ՀՀ-ում ներկայումս այս ուղղությամբ ևս նախատեսված են փոփոխություններ, որոնց աշխատանքում մանրամասն անդրադարձել ենք։	Անգլիայում գործում է եռաստիճան կրթական համակարգ, որտեղ երրորդ աստիճանը գիտության դոկտորի(PhD) աստիճանն է։ Այսինքն կիրառվում է Բոլոնյան գործընթացի 10-րդ ուղղությունը՝ դոկտորանտուրան որպես կրթության երրորդ աստիճան, ինչից պարզ է, որ գիտական աստիճանաշնորհման մեկ մակարդակ է գործում, որն էլ համարվում է կրթության երրորդ աստիճան։
Բուհի ղեկավարում և ռեկտորի ընտրություն	
ՀՀ-ում բուհի գործադիր մարմինը ռեկտորն է, ում ընտրում է բուհի խորհուրդը կամ հոգաբարձուների խորհուրդը։ Ռեկտորի ընտրության կարգը սահմանվում է օրենսդրությամբ և տվյալ բուհի կանոնադրությամբ։	Անգլիայում բուհի ղեկավարը կանցլերն է, ով ընտրվում է բուհի խորհրդում։ Կանցլերը ավելի ներկայացուցչական կերպար է և որպես կանոն թագավորական ընտանիքից է։ Իսկ բուհի ընթացիկ գործունեությունը իրականացնում է փոխկանցլերը (ռեկտորը), ում պաշտոնը նշանակովի է։
Ուսանողական վարկեր	
ՀՀ բուհական համակարգում պետականորեն առաջարկվող վարկային ծրագրեր չկան, ինչը ապացույցն է նրա, որ պետությունը չունի երաշխիք այն բանի, որ բուհերի ուսանողները ուսումնառությունից անմիջապես հետո կանցնեն աշխատանքի ու կկարողանան մարել վարկերը։	Անգլիայում գործում է ուսանողական վարկերի պետական համակարգ, որն ըստ առաջադիմության ուսանողներին տրամադրում է ուսանողական վարկեր։

Աղյուսակ 2-ի շարունակությունը *Կրթական աստիճանների դասակարգում*	
ՀՀ բուհական համակարգում կրեդիտ շնորհվում է կրթական մոդուլներից ստացած նվազագույն դրական գնահատականի դեպքում: Ըստ կրթական աստիճանի, համապատասխան կրեդիտներ կուտակելով ստանում են կրթական աստիճան, առանց դասակարգելու ուսումնառության ընթացքն ու սովորողի առաջադիմությունը:	Անգլիական կրթական համակարգում կրեդիտների հատկացման մեխանիզմը նույնն է, սակայն, ըստ սովորողի առաջադիմության կրթական աստիճանները շնորհվում են դասակարգումով:
Բարձրագույն կրթություն իրականացնող հաստատություններ և այլընտրանքային մատակարարներ	
ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում կրթական ծրագրեր իրականացնում են հիմնականում բարձրագույն ուսումնական հաստատությունները, բացառությամբ՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մագիստրատուրայի:	Անգլիայում բարձրագույն կրթության համակարգում կրթական ծրագրեր իրականացնում են ոչ միայն համալսարաններն ու համալսարանական քոլեջները, այլև կրթության այլընտրանքային մատակարարները, որոնք կարող են բարձրագույն ուսումնական հաստատություն չլինել: Վերջիններս կարող են ֆինանսավորվել բուհերի կողմից որևէ կոնկրետ կրթական ծառայություն իրականացնելու համար:
Որակի ապահովման գործընթաց	
Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է: Հավատարմագրման եզրակացությունները Հայաստանում բազմաստիճան են: Հայաստանում հավատարմագրման գործընթացը բուհի ֆինանսավորման համար որպես գործոն սահմանված չէ:	Անգլիայում հավատարմագրման գործընթացը համատարած պարտադիր բնույթ չի կրում: Հավատարմագրման եզրակացությունները Անգլիայում հիմնականում նկարագրական են: Անգլիայում հավատարմագրման գործընթացը կիրառվում է կառավարությունից ֆինանսավորում ստանալու համար որպես նախապայման:

Աղյուսակ 2-ի շարունակությունը *Գնահատման համակարգ*	
Հայաստանում պետական բուհերի ընդունելության համակարգում գործում է միասնական 20 բալանոց գնահատման համակարգը, որտեղ 8-ը անցողիկ գնահատական է: Իսկ արդեն բուհերում կիրառվում են 20 և 100 բալանոց համակարգեր:	Անգլիայում բուհերի ընդունելության, ինչպես նաև բուհերում ուսումնառության գործընթացում գործում է տառային գնահատման համակարգը՝ A B C D E F G, որտեղ ամենաբարձրը A-ն է, իսկ F-ը անցողիկ:

Երրորդ՝ ***«Բարձրագույն կրթության համակարգի ինստիտուցիոնալ ու համակարգային կառավարման մեխանիզմների առաջարկ»*** ենթագլխում ներկայացված է կառավարման մեխանիզմի առաջարկ, որտեղ հաշվի է առնված Անգլիայի առաջավոր փորձը, բայց տեղայնացված է և իրատեսական ու իրագործելի է Հայաստանի համար: Մեր կողմից մշակված բարձրագույն կրթության համակարգի կառավարման նոր մեխանիզմի իրագործման դեպքում կունենանք հետևյալը՝

1. ներպետական հավասար մրցակցային պայմաններում գործող բուհեր,
2. կրթության համադրելի աստիճաններ ԵԲԿՏ շրջանակում,
3. ավելի ինքնավար ու ազատական բուհեր,
4. հավատարմագրման նոր համակարգ,
5. բարձրագույն կրթության համակարգում միայն հավատարմագրված պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ,
6. բուհերի մրցակցային ֆինանսավորման համակարգ,
7. կրեդիտների առարկայական մակարդակով փոխանցման հնարավորություն,
8. բուհի ընդունելության բաց համակարգ,
9. ուսանողներին ընտրելու հնարավորություն, որը տրվում է բուհերին,
10. դպրոց-բուհ կապի ամրապնդում, քանի որ դպրոցի ամփոփիչ գնահատականներով է լինելու ուսանողների ընդունելությունը,
11. մասնագիտական կողմնորոշում իրականացնելու ինստիտուտ,
12. համատեղ կրթական ծրագրեր պետության ներսում,
13. համատեղ կրթական ծրագրեր Էրազմուս ու Տեմպուս ծրագրերի շրջանակում,
14. կրթության ոչ ֆորմալ եղանակի կիրառություն և չափելիություն,
15. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների (ԿԱՊԿՈՒ) ներգրավվածությունը բուհերում և աշխատաշուկայում,
16. մասնագիտական ոլորտի վրա կենտրոնացված կրթություն,
17. բարձրագույն կրթության ոլորտում գործունեություն ծավալող բարեգործական հիմնադրամների կենտրոնացված ու համակարգված աշխատանք,
18. բուհերի կառավարման մարմիններում փոփոխություններ,
19. վարչական պաշտոնների ընտրության և գործունեության դաշտում փոփոխություն,
20. ներդրողների ու գործատուների ներգրավումը բուհի կառավարման համակարգ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանգամանորեն ուսումնասիրելով և համեմատական վերլուծության ենթարկելով Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները, նմանությունները և տարբերությունները, հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտը դիտարկվում է պետության համար կարևոր նշանակության ոլորտ, և օրենքներով սահմանվում են պետական կրթական քաղաքանությունը, կրթական քաղաքականության սկզբունքներն ու խնդիրները, որոնք ուղղված են քաղաքացիների կրթություն ստանալու իրավունքի ապահովմանը, հայապահպանությանն ու ազգային արժեքների պահպանմանը, կրթության ազգային համակարգի միջազգայնացմանը, կրթության որակի և բուհերի ինքնավարության ապահովմանը:

2.Անգլիայի պետական կառավարման առանձնահատկություններով պայմանավորված որևէ օրենքով սահմանված չեն կրթական քաղաքականության սկզբունքները, սակայն բարձրագույն ուսումնական հաստատություններին ընձեռած հնարավորություններից ակնհայտ է պետական կրթական քաղաքականությունը: Անգլիայում բարձրագույն կրթության քաղաքականությունը միտված է ոչ միայն ժամանակին համընթաց զարգանալուն, այլև ժամանակից առաջ ընկնելով նորը ստեղծելուն և արտահայտված է կատարելության ձգտումով:

3. Հայաստանում օրենքով և պետական՝ վերահսկողությամբ կարգավորվում է բարձրագույն կրթության ողջ դաշտը՝ կառավարումից մինչև կրթության բովանդակություն, իսկ Անգլիայում բարձրագույն կրթության համակարգի կառավարումն իրականացնում են բուհերը՝ առաջնորդվելով պետության սահմանած առաջնահերթություններով:

4.Կրթության ոլորտում ֆինանսներն ու որակն իրար հետ փոխկապակցված են, քանի որ մրցունակ ու որակյալ կրթություն առանց ֆինանսական ներդրումների հնարավոր չէ: Հայաստանում պետական բուհերը պետությունից ստանում են քիչ ֆինանսավորում, իսկ բյուջեների մեծ մասը ծախսվում է աշխատավարձային ֆոնդի վրա, ինչից ակնհայտ է, որ լուրջ ներդրումներ ու արդյունքներ պետական բուհերն ունենալ չեն կարող: Որքան էլ պլանավորվում է ֆինանսավորման աղբյուրների և ձևերի փոփոխություն, միևնույն է խնդիրը նաև ֆինանսավորման ծավալն է, որը ՀՀ-ում ՀՆԱ-ի 0,2 տոկոսն է կազմում:

5. Անգլիայում բարձրագույն կրթության և գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները բուհերին մրցունակ ու նորարար են դարձնում: Պետական կրթական քաղաքականության մի հստակ գիծ է նաև բուհերին արդյունաբերության ոլորտ ներքաշելը, որտեղ իրացվում է հենց բուհերի գիտական ու արտադրական ներուժը, ինչը երկուստեք շահավետ է և նպաստում է բուհի ու երկրի տնտեսության զարգացմանը:

6. Որակի ապահովման գործընթացներն ընդհանուր գծերով նման են Հայաստանում և Անգլիայում, քանի որ դրանք նորմավորվում են Բոլոնյան գործընթացի համատեքստում: Նման են Որակի ապահովման ազգային կենտրոններն իրենց

հիմնական գործառույթներով: Սակայն խնդիրները, որ դրված են երկու երկրների կրթության համակարգերի որակի ապահովման հիմքում, տարբեր են:
7. Հայաստանում բարձրագույն կրթության համակարգի կառավարման հիմքում դրված են ոչ միայն որևէ ոլորտի որակյալ մասնագետների պատրաստումը և բարձրագույն կրթության ազգային համակարգի մրցունակության ապահովման խնդիրը, այլև սոցիալական բոլոր խմբերի համար կրթության մատչելիության, հայապահպանության, հայկական սփյուռքում ազգային ինքնության պահպանման հարցերը, որոնք տեղային բնույթ են կրում: Իսկ Անգլիայում բարձրագույն կրթության կառավարման հիմքում ինովացիաներն են, նոր գաղափարների հավաքագրումն ու օգտագործումը, կրթությունը գործարար ոլորտում իրացնելը, աշխարհի հետազոտողների ուշադրությունը դեպի Անգլիա կենտրոնացնելը:
8. Հայաստանում բարեփոխումների գործընթացները սկսվեցին Բոլոնյան գործընթացին միանալու ժամանակամիջոցում, դրանք ոչ միայն ժամանակի, այլև օրենքի պահանջ էին: Մեր երկրում բարեփոխումներն ընթացան մի քանի ուղղություններով, որոնք ՀՀ բուհերին միջազգայնացման հնարավորություններ տվեցին, քանի որ կրթական աստիճաններով ու որակավորումներով արդեն համադրելի էին ԵԲԿՏ անդամ երկրների հետ:
9. Անգլիայում բարեփոխումների առանցքը նոր գաղափարն ու գիտության առևտրայնացումն է: Անգլիայում որքան էլ բուհերն անկախ են, Կառավարությունը ծրագրեր է մշակում ինովացիաների խթանման ուղղությամբ:
10. Ատենախոսության շրջանակում մեր կողմից մշակված բարձրագույն կրթության համակարգի կառավարման նոր մեխանիզմներն իրենց մեջ ներառում են բուհերի կառավարման մեխանիզմ՝ համակարգային և ինստիտուցիոնալ մակարդակներում: Ներկայացված բոլոր դրույթները վերլուծված ու հիմնավորված են, հաշվի է առնված դրանց իրագործման իրատեսականությունը Հայաստանի ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատություններում՝

1. Աբրահամյան Ա.Դ., Որակի ապահովման գործընթացները Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերում, «Կրթությունը 21-րդ դարում», ԵՊՀ, 2022, թիվ 1, էջեր 157-165:

2. Աբրահամյան Ա.Դ., ՀՀ բարձրագույն կրթության համակարգի հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները, «Կրթությունը 21-րդ դարում», ԵՊՀ, 2021, թիվ 1(5), էջեր 14-20:

3. Աբրահամյան Ա.Դ., Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարումը, «Մխիթար Գոշ», 2020, N1, էջեր 35-44:

4. Աբրահամյան Ա.Դ., Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ», 2020, N2(17), էջեր 200-204:

5. Աբրահամյան Ա.Դ., Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի նմանություններն ու տարբերությունները, «Մխիթար Գոշ», 2020, N2, էջեր 49-59:

6. Աբրահամյան Ա., Հարությունյան Ն., Անգլիայի կրթության զարգացման պատմությունը 6-ից 11-րդ դարերում, «Մանկավարժական միտք», Երևան, 2017, 1-2, էջեր 271-273:

7. Աբրահամյան Ա., Ինտեգրացիոն գործընթացները Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2016, 3-4, էջեր 4-7:

АБРААМЯН АНИ

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ УПРАВЛЕНИЯ СИСТЕМАМИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ АРМЕНИИ И АНГЛИИ

Диссертация на соискание ученой степени 13.00.001-кандидат педагогических наук по специальности «Теория и история педагогики".
Защита диссертации состоится 18 ноября 2022 года в 14:00 на профессиональном Совете 058 по педагогике ВАК РА, действующем в Ереванском государственном университете.

Адрес: РА, 0025, г. Ереван, Абовян 52а, 8-ой корпус Ереванского государственного университета, аудитория № 203.

РЕЗЮМЕ

Актуальность темы. В постоянно меняющемся мире, где нет территориальных границ для деятельности человека, возрастает задача сохранения и развития интеллектуального потенциала внутри своей страны для государств, повышения сознательного уровня общества и развития человеческих ресурсов во всех сферах. В вопросе противостояния этим и подобным вызовам очень важна проводимая государством образовательная политика, поскольку посредством высшего профессионального образования мы готовим специалистов для всех сфер страны, профессиональным качеством которых обусловлено развитие сферы, соответственно и всего государства.

Для такой развивающейся страны, как Армения, ситуация становится еще более сложной, поскольку в условиях глобализации у Армении все еще есть проблемы в вопросе сохранения и развития национальной системы образования, обеспечения конкурентоспособности на международной образовательной арене и повышения привлекательности национальной системы высшего образования. Республика Армения является членом Европейского пространства высшего образования, что является большой возможностью для учащихся и работников в сфере высшего образования с точки зрения мобильности, но еще одна проблема для государства-это утечка интеллектуального потенциала, решение которой-постоянное совершенствование системы высшего образования Армении. Изучение систем образования разных стран, сравнительный анализ их управления решает две важные задачи: обмен познавательным и передовым опытом.

Этим исследованием впервые подвергаются сравнительному анализу системы управления высшим образованием Англии, Одной из развитых стран Армении и Европы, выявляются сходства и различия, достижения и проблемы.

Именно этим обусловлена актуальность темы нашего исследования.

Цель исследования. Целью исследования является сравнение систем управления высшим образованием Армении и Англии, их сходства и различия, достижения и проблемы.

Научная новизна исследования.

1. Были проанализированы и выявлены сходства и различия в управлении системами высшего образования Армении и Англии, достижения и проблемы.
2. Были выявлены и представлены различия в Законодательном и подзаконном поле РА.
3. Были исследованы и проанализированы перспективы развития системы высшего образования Армении и Англии.
4. На основе изучения передового опыта разработан новый механизм управления системой высшего образования для высшего образования Армении.

Теоретическое значение исследования. Были изучены и проанализированы многочисленные правовые документы и профессиональная литература по управлению системами высшего образования Армении и Англии, интерпретированы подходы и точки зрения различных авторов по управлению системами высшего образования двух стран, осуществленным реформам, достижениям и проблемам, представляя наши подходы к ним.

Практическая значимость исследования. Аналитический материал и разработанные предложения многочисленных первоисточников по проблеме могут быть использованы в реформах, осуществляемых на системном и институциональном уровнях в сфере управления высшим образованием Республики Армения. Материалы исследования могут быть использованы также на курсах управленческого характера образования, а также могут быть полезны при эффективной деятельности исследователей, работников сферы высшего образования.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы, 7 таблиц, 4 графиков. Общий объем диссертации составляет 131 компьютерных страниц.

ABRAHAMYAN ANI DAVIT

COMPARATIVE ANALYSIS OF THE MANAGEMENT OF THE HIGHER EDUCATION SYSTEMS OF ARMENIA AND ENGLAND

Dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences majoring in 13.00.001 "Theory and History of Pedagogy". The defense of the dissertation will be held on November 18, 2022, at 2:00 p.m., at the 058 Professional Council of Pedagogy of the RA BOK operating at Yerevan State University.

Address: Abovyan 52a, 8th building of Yerevan State University, auditorium number 203, Yerevan, RA 0025.

SUMMARY

Relevance of the topic. In a changing world, where there are no territorial boundaries for human activity, the problem of maintaining and developing the intellectual potential within a country, raising the level of consciousness of society, and developing human resources in all areas is increasing. To face these and similar challenges, the state's educational policy is very important, as, through higher professional education, we prepare specialists for all sectors of the country whose professional quality defines the development of the sector, as well as of the country.

For a developing country like Armenia, the situation becomes more complicated, because, in the conditions of globalization, Armenia still has problems in maintaining and developing the national education system, ensuring competitiveness in the international educational arena, and increasing the attractiveness of the national higher education system. The Republic of Armenia is a member of the European Higher Education Area, which is a great opportunity for students and workers in the field of higher education in terms of mobility, but another problem for the state to worry about is the brain drain, the solution of which is the continuous improvement of the higher education system of Armenia. In the study of education systems of different countries, the comparative analysis of their management solves two important problems: cognitive and advanced experience exchange.

With this research, for the first time, the higher education management systems of Armenia and one of the developed countries of Europe, England, are subjected to a comparative analysis, and similarities and differences, achievements, and problems are highlighted. These are the reasons for the relevance of our research topic.

The purpose of the research. The research aims to compare the higher education management systems of Armenia and England, their similarities and differences, achievements, and problems.

The scientific novelty of the research:

1.The similarities and differences, achievements, and problems of higher education systems of Armenia and England were analyzed and highlighted.

2. The contradictions in the RA legislative and sub-legislative fields were revealed and presented.
3. The development prospects of the higher education system of Armenia and England were researched and analyzed.
4. Based on the study of the leading experience, a new management mechanism of the higher education system for the higher education sector of Armenia.

The theoretical significance of the research. A large number of legaldocuments and professional literature on the management of the higher education systems of Armenia and England were studied and analyzed, and the approaches and views of different authors regarding the management of the higher education systems of the two countries, the reforms implemented, achievements and problems were interpreted, giving our approaches to them.

The practical significance of the research. Analytical materialfromalargenumber of primary sources and developed recommendations on the main problem can be used in the reforms carried out at the systemic and institutional levels in the field of higher education management of the Republic of Armenia. The research materials can also be used during education management courses, and can also be useful in the effective activities of researchers and workers in the field of higher education.

The structure and volume of the dissertation. The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography, 7 tables, and 4 diagrams. The total volume of the work is 131 computer pages.